

ԳԵՂԱՄՍ

աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 30 հունվարի 2026թ. թիվ 2 (631)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ԾԱՂԿԵԴՐՈՒՄՈՎ ՈՒ ՇՈՒՔՈՎ ՀԱՐԳԵՑԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ



բազմաթիվ քաղաքացիներ: Հուշահամալիրում հոգեհանգստյան կարգ կատարեց Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Իսահակ վարդապետ Պողոսյանը: -Այսօր մենք կանգնած ենք լռության առջեւ, բայց այդ լռությունն իմաստավորված է դիմագծով, հետագծով, քայլքով, շնչով ու զործով, եւ այդ ամենահուղիղը, ինքնագոհունը անսակարկելի է,

Հունվարի 27-ի առավոտվանից մարդաշատ էին Գեղարքունիքի մարզի հուշահամալիրները, պանթեոնները, շիրմատները, որտեղ հազարավոր քաղաքացիներ ծաղկեդրումով, խոնարհումով, խնկարկումով ու աղոթքով իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Հայրենիքի համար նահատակված հերոսների սուրբ հիշատակին: Գավառ քաղաքի զբոսայգում Հայրենիքի համար նահատակված հերոսների պանթեոն-հուշահամալիրում, ծաղկեպսակ դրեցին եւ ծաղիկներ խոնարհեցին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Իսահակ վարդապետ Պողոսյանը, Գեղարքունիքի մարզպետի եւ Գավառի համայնքապետարանի աշխատակազմերի ղեկավար կազմերը եւ աշխատակիցները, կրթամշակութային ու առողջապահական հաստատությունների ներկայացուցիչները, Գավառի պետական համալսարանի եւ քոլեջների ուսանողները, դպրոցների աշակերտները, զոհված հերոսների ընտանիքների անդամներն ու հարազատները,

անմոռանալի: Անկարելի է հարեւանցել մեր հերոսների սխրանքը: Լույս մեր հերոսների շիրմներին, հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի, իսկ մեզ ուժ, կորով, սեր, միություն, գորացում, մարդասիրություն, առաքելության կանչ ու կոչ, որպեսզի յուրաքանչյուրս յուրովի պահենք, շահենք մեր տունը՝ Հայոց տունը: Ուժ եւ կարողություն ամենքիս, -Հոգեհանգստյան կարգից հետո ներկաներին դիմեց Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահը: Հայրենիքի համար նահատակված հերոսների հիշատակի, ծաղկեդրման եւ ոգեկոչման արարողություններ տեղի ունեցան նաեւ Գեղարքունիքի մարզի Մարտունի, Սեւան, Ճամբարակ, Վարդենիս համայնքներում մասնակցությամբ համայնքների ղեկավարների, աշխատակազմերի աշխատակիցների, կրթամշակութային ու առողջապահական հիմնարկների աշխատակազմերի, զոհված հերոսների ընտանիքների անդամների ու հարազատների, Հայ Առաքելական եկեղեցու հոգեւոր դասի, բազմաթիվ անհատ քաղաքացիների: **«Գեղամա աշխարհ»**

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԸՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԸՇ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՌԹՎ




Սիրելի հայրենակիցներ, ՀՀ բանակի հրամանատարներ եւ սպաներ, զինծառայողներ եւ կամավորականներ, ռազմական գործի ներկայացուցիչներ, զինվորներ, Այսօր մենք ոչ միայն նշում ենք Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման հերթական տարեդարձը, այլ եւս մեկ անգամ հիշեցնում ինքներս մեզ, որ բանակը մեր պետականության սյուններից մեկն է, մեր գոյության եւ ապագայի պահապանը: Այս տարիները ցույց տվեցին, որ բանակը պարզապես կառույց է. այն կամքի, պատասխանատվության եւ մկրտմանի միասնությունն է: Ամեն զինվոր իր ծառայությամբ ապացուցում է, որ հայրենիքի պաշտպանությունը պարտք է միայն, այլ՝ բարձրագույն առաքելություն: Մեր ժողովրդի ուժը միասնականության մեջ է: Երբ թիկունքն ամուր է, երբ հասարակությունն արժեւորում է զինվորին ոչ միայն խոսքով, այլ նաեւ զործով, բանակն առավել ուժեղ է դառնում: Այդ համերաշխությունը պետք է լինի մեր ամենօրյա ուղեկիցը: Խոնարհումս բոլոր նրանց հիշատակին, ովքեր իրենց կյանքը տվեցին հանուն հայրենիքի: Նրանց հերոսությունն է, որ մեզ պարտավորեցնում է կառուցել ավելի խաղաղ, անվտանգ եւ արժանապատիվ Հայաստան: Թող այս օրը նոր հավատ ու վստահություն տա մեզ բոլորիս, իսկ մեր բանակին՝ ուժ, բարձր մարտունակություն եւ անսասան ոգի: Ընորհավոր ՀՀ բանակի կազմավորման տարեդարձը: Թող խաղաղությունը լինի մեր ամենամեծ հաղթանակը:

ՎԱՆՐԱԿ, ԲԱՅՑ ԾՔԵՎԱՇՈՒՔ ՈՒ ԱՌԻՐ ԽԱՎԱՇԻ ՎԱՆՔԸ

Սկիզբը՝ նախորդ համարում/ **ԽԱՄՇԻ ՎԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿՆԵՐԸ** Խամշի վանքի ճարտարապետության մասին կարելի է պատկերացում կազմել միայն տարածքով մեկ սփռված քարերի ու քարաբեկորների հարդարված, քանդակված, նախշազարդ ու բազմազան տեսքից, քանի որ կառույցը մեզ է հասել բացառապես ավեր վիճակում, այն էլ՝ հողի հաստ շերտը մաքրելուց հետո: Սա, այո, մի անկրկնելի ճարտարապետություն է կրում իր մեջ, որը հենվել է ազգային հին ճարտարապետական ավանդների վրա, սակայն հարստացվել է նոր մտահղացումներով ու բարձրարվեստ ճաշակով: Վանական համալիրը բաղկացած է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց, գավթից եւ արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև հատակագծով գմբեթավոր փոքր եկեղեցուց: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցված է սրբատաշ քարով՝ իր դիրքով ու ծավալով ունենալով իշխող դիրք: Ըստ գրքի հեղինակների՝ տաճարը նախապես կառուցվել է առանձին, առանց ժամատան, որը հետագայում կառուցվել է եկեղեցու արեւմտյան կողմում ծած-

կելով տաճարի գլխավոր ճակատի մեծ մասը եւ դռան շուրջը փիրուզագույն ու դեղնավուն ռոմբաձև քարերով հարդարված շքամուտքը: Կառույցը կրկնում է հայ դասական ճարտարապետության մեջ 11-13-րդ դարերի ընթացքում լայն տարածում ունեցած արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ

խաչաձև շինությունների այն տիպը, երբ ներքին խաչաձև հորինվածքը ստեղծվել է շինության չորս անկյուններում գետեղված երկհարկ ավանդատներով: Եկեղեցին զբաղեցնում է 204 քառակուսի մետր տարածք՝ 12 մետր լայնությամբ ու 17 մետր երկարությամբ: Այն աչքի է ընկնում կառուցողական բարձր արվեստով բազմերանգ քարերի օգտագործմամբ ու կատարյալ մշակմամբ: Որոշ հատվածներում պահպանվել են եկեղեցու պատերի չորսից հինգ շարքերը: Խաչաձև սրահի արեւմտյան թեւը երկար է, իսկ հյուսիսային եւ հարավայինը՝ կարճ: Արեւելյան թեւում ներսից կիսաշրջանաձև ավագ խորանն է՝ բեմի եւ բեմառեքի համար բարձրացված դարձյալ կիսաշրջանաձև տարածություն: Աղոթարարի ներքին ամբողջ ծավալի վրա գերիշխել է եկեղեցու գմբեթը: Կառույցը պատկերվել է բազմանիստ թմբուկով: Դեպի վեր են ուղղված եղել մեծածավալ քարաբեկորներից կերտված սլացիկ որմնաայտները, սլաքաձև գմբեթակիր կամարները: Թմբուկը լուսավորվել է ուղղանկյունաձև ու շրջանաձև բացվածքի լուսամուտներից: **/շարունակությունը՝ էջ 4-ում/**



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԽՐԱՆՈՒՄԵՅ ՄԱՐԶԻ ԲՈՆՅՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻԶՆԵՐԻՆ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունեց եւ մարզպետի շնորհակալագրով խրախուսեց միջազգային ու հանրապետական առաջնություններում մրցանակային տեղեր զբաղված բռնցքամարտիկներին եւ նրանց մարզիչներին:

Հանդիպման սկզբում Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Գեւորգ Սարգսյանը ներկայացրեց չորս տարիքային խմբերում Գեղարքունիքի մարզը ներկայացնող բռնցքամարտիկների գրանցած հաջողությունները հանրապետական ու միջազգային ստուգատեսներում խոսելով նաեւ առաջիկա մրցաշարերի նախապատրաստության ու առաջնահերթ անելիքների մասին:

Մարզպետ Կարեն Սարգսյանը շնորհավորեց մրցանակակիր մարզիկներին ու նրանց մարզիչներին, ցանկացած հետագա հաջողություններ ու նորանոր հաղթանակներ՝ հույս հայտնելով, որ գալիք տարվա սկզբին դրանք կլինեն ավելի ծանրակշիռ ու ավելի հեղինակավոր ստուգատեսներում:

«Կարենը հաղթանակները, անշուշտ, ոգևորում են նաեւ ձեր ընկերներին ու տարեկիցներին ու նպաստում, որ բռնցքամարտը մեզանում դառնա շատ ավելի ընդգրկուն ու մասսայական մարզաձև: Իսկ առավել



կարելուրն այն է, որ ձեր հաղթանակներով դուք բարձր եք պահում Հայաստանի Հանրապետության, Գեղարքունիքի մարզի եւ ձեր համայնքների մարզական պատիվը, աշխարհին ճանաչելի դարձնում մեր երկիրը, ինչի համար եւ շնորհակալություն եմ հայտնում ձեզ՝ մարզիչներին ու մարզիկներին,- նշեց Կարեն Սարգսյանը:

Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրվեցին մարզիչներ Գեւորգ եւ Գագիկ

Սարգսյանները, Էդգար Սահակյանը, Հովիկ Վարդանյանը, Գեւորգ Հովհաննիսյանը, Մարատ Կարոյանը, Տարոն Իսպիրյանը եւ Մանուշակ Դավուդյանը: Գեղարքունիքի մարզում բռնցքամարտի զարգացման գործում ունեցավ վաստակի ու երկարամյա մարզական աշխատանքում զբաղված հաջողությունների համար Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրվեց նաեւ արդեն վաստակած հանգստի անցած մարզիչ Վազգեն Շահինյանը:

Մարզիկներից Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրին արժանացան Մարտունի, Ճամբարակ, Սեւան, Վարդենիս եւ Գավառ համայնքները ներկայացնող բռնցքամարտիկներ Ջուլիետա Մարգարյանը, Մարգարիտա Աղաբաբյանը, Գոռ Ղազարյանը, Սիմոն Սիմոնյանը, Արեգ Ավդալյանը, Շուշան Հովհաննիսյանը, Կարեն Զախարյանը, Աննա Մանուկյանը, Մերի Մանջոյանը, Ազատուհի Ներսիսյանը, Նազելի Ավագյանը, Սիեր Խեչոյանը, Արաբայա Շառաբայանը, Էլեն Բարսեղյանը, Կարինե Դալլաբայանը, Արսեն Խլղաթյանը եւ Հայկ Մարգարյանը:

Հանդիպման ավարտին իր եւ ՀՀ բռնցքամարտի ֆեդերացիայի անունից Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Գեւորգ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց մարզպետ Կարեն Սարգսյանին Գեղարքունիքի մարզում բռնցքամարտի զարգացմանը մշտապես աջակցելու եւ հաղթանակ գրանցած մարզիկներին խրախուսելու համար:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԿԱՅԱՅԵԼ Է ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի եւ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի համատեղ նախաձեռնությամբ հունվարի 14-ին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի նիստերի դահլիճում տեղի է ունեցել սեմինար-քննարկում՝ Վտանգների վերլուծության եւ հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրման վերաբերյալ:

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ սննդի անվտանգության տեսչական մարմնի սննդամթերքի անվտանգության եւ որակի վերահսկողության վարչության պետ Գոհար Վարդանյանը, տեսչական մարմնի պատասխանատու աշխատողներ, տեսչական մարմնի Գեղարքունիքի մարզային կենտրոնի պետ Սպարտակ Մելքոնյանը, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, մարզային ենթակայության հանրակրթական հաստատությունների, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների տնօրեններ, համայնքապետարանների եւ հանրային սննդի օբյեկտների ներկայացուցիչներ: Սեմինար-քննարկումը վարել է Գեղարքունիքի



մարզպետի տեղակալ Վահան Զարոյանը: ՀՀ սննդի անվտանգության տեսչական մարմնի սննդամթերքի անվտանգության եւ որակի վերահսկողության վարչության պետ Գոհար Վարդանյանը ներկայացրեց հաստատությունների համար սննդամթերքի անվտանգության վարտադրի պահանջները, վտանգների գնահատման մեխանիզմները, հսկման կրիտիկական կետերի որոշման սկզբունքները, դրանց արդյունավետ կիրառման լավագույն փորձերը, ինչպես նաեւ ռիսկերի մվագեցման մեթոդները եւ վերահսկողության գործընթացների կատարելագործման ուղիները:

Նա նշել է, որ Վտանգների վերլուծության եւ հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրումը արտադրություններում եւ հանրային սննդի օբյեկտներում անհրաժեշտ է սննդամթերքի անվտանգության ռիսկերը նվազագույնի հասցնելու եւ սննդամթերքի արտադրության ողջ շղթան կենսաբանական, քիմիական եւ ֆիզիկական վտանգներից պաշտպանելու համար:

Հանդիպման ավարտին ՍԱՏՍ ներկայացուցիչները պատասխանել են մասնակիցների կողմից բարձրացված հարցերին:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ Է ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԸ



Գեղարքունիքի մարզում 2026 թվականի հունվարի 14-ից սկսվել է ընթանում է 2025-2026 թվականների ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլը:

Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ հաստատվել է օլիմպիադայի անցկացման կազմակերպչական կազմը, առարկայական հանձնաժողովների կազմերը, օլիմպիադայի անցկացման ժամանակացույցը եւ անցկացման վայրը:

Օլիմպիադայի մարզային փուլը մեկնարկել է հունվարի 14-ին: Առաջին օրն իրենց գիտելիքներն են ստուգել ռուսաց լեզու առարկայից երաշխավորված 84 դպրոցականներ: Հունվարի 16-ին էլ օլիմպիադայի մարզային փուլին մասնակցել են քիմիա առարկայի մասով երաշխավորված 79 դպրոցականներ:

Իսկ հունվարի 19-ից փետրվարի 6-ն ընկած ժամանակահատվածում առարկայական օլիմպիադայի տարածքային փուլում հաղթած դպրոցականները մարզային փուլին կմասնակցեն մաթեմատիկա, հայոց լեզու, ֆիզիկա, հայ գրականություն, աստղագիտություն, աշխարհագրություն, ինֆորմատիկա, կենսաբանություն, պատմություն, օտար լեզուներ, ՆՁՊ եւ մայրենի առարկաների մասով:

Առարկայական օլիմպիադայի մարզային փուլն անցկացվում է Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

2025-2026 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի արդյունքները կամփոփվեն 2026 թվականի փետրվարի 12-ին: Լավագույն արդյունք արձանագրած դպրոցականները օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցելու երաշխավորություն ձեռք կբերեն:

Համբարձում Սաֆարյան

ԳԱԳԱՐԻՆՈՒՄ ԳՈՐԾԱՐԿՎԵԼ Է ՆՈՐ ՍԵՐՆԻԻ ԱՐԶԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Գեղարքունիքի մարզի Գագարին բնակավայրում գործարկվել է նոր սերնդի արհեստական բանականության տվյալների կենտրոն, որը կարելու է Հայաստանի բարձր տեխնոլոգիական ենթակառուցվածքների զարգացման ճանապարհին: Կենտրոնը ստեղծվել է «Eleveight AI» ընկերության կողմից, որի հիմնադիր եւ գլխավոր գործադիր տնօրենն է Արման Ալեքսանյանը, իսկ քիզնեսի զարգացման գլխավոր տնօրենը՝ Դավիթ Առաքելյանը:

Դատակենտրոնը հագեցած է ամենաարդիական «NVIDIA Blackwell» B300 սերնդի գրաֆիկական պրոցեսորներով, որոնք բարձր արտադրողականությամբ հաշվարկային քարտեր են նախատեսված արհեստական բանականության մոդելների ուսուցման, գեներատիվ ԱԲ-ի, բարդ վերլուծությունների եւ մեծածավալ տվյալների մշակման համար: Դրանք այսօր համարվում են ԱԲ ոլորտի շարժիչ ուժը:

Կենտրոնում տեղակայված է 512 GPU քարտ, որոնց ընդհանուր էներգետիկ հզորությունը հասնում է 1,2 մեգավատի: Սա հնարավորություն է տալիս իրականացնել համաշխարհային մակարդակի հաշվարկային աշխատանքներ ապահովելով կայունություն, արագություն եւ շարունակական ծանրաբեռնվածություն:

Ծրագրի շրջանակում իրականացվել է շուրջ 60 միլիոն ԱՄՆ դոլարի մասնավոր ներդրում, իսկ այս պահին կենտրոնում աշխատում է 15 մասնագետ, որոնց թիվը առաջիկայում նախատեսվում է ավելացնել: Դատակենտրոնը կառուցվել է էներգաարդյունավետ մոտեցումներով՝ ներառելով նաեւ

վերականգնվող էներգիայի կիրառման լուծումներ:

Նախագիծը ոչ միայն տեխնոլոգիական, այլև ռազմավարական նշանակություն ունի. այն նպաստում է Հայաստանում սուվերեն հաշվարկային հզորությունների ձեւավորմանը, տեղական ԱԲ ենթակառուցվածքների զարգացմանը եւ երկրի դիրքերի ամրապնդմանը գլոբալ տեխնոլոգիական քարտեզում:

Օրենս Գագարինում գործարկված նոր սերնդի արհեստական բանականության տվյալների կենտրոն է այցելել եւ իրականացված աշխատանքներին ծանոթացել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

Սանանա Գալստյան



ԲՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է Եվրոպական Միության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող եւ GIZ-ի կողմից իրականացվող «Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում հանուն Հայաստանում կայուն համայնքային զարգացման» (EU4Sevan+) ծրագրի ղեկավար Նիլս Թեվսին եւ ծրագրի կեղտաջրերի կառավարման խորհրդատու Էդգար Փիրումյանին:



Մարզպետ Կարեն Սարգսյանը կարելի է ծրագրի իրականացումը Գեղարքունիքի մարզում ընդգծելով Սեւան լճի պահպանության եւ ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման ռազմավարական նշանակությունը մարզի եւ հանրապետության համար: Կողմերը քննարկել են նաեւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության նախարարության կողմից հնարավոր աջակցության ուղղությունները եւ համագործակցության հետագա քայլերը:

«Գեղամա աշխարհ»

ԿԱՅԱՑՅԵԼ Է «ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿՐԹՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԻ ԵՆՍՏԸ




մալսարանի հակակոռուպցիոն ծրագրի իրականացման, հիմնադրամի 2025 թվականի եկամուտների եւ ծախսերի կատարողականի վերաբերյալ հաշվետվությամբ, ինչպես նաեւ հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացրել 2026 թվականի ֆինանսական տարվա եկամուտների եւ ծախսերի նախահաշիվը եւ զարգացման տարեկան ծրագրի նախագիծը:

Կայացել է «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը, որը վարել է խորհրդի նախագահ, ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը:

Հոգաբարձուների խորհուրդը հաստատել է «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի կառուցվածքը, հաստիքացուցակը, ԳՊՀ էթիկայի, ակադեմիական բարեվարքության եւ վարվեցողության ներքին կանոնակարգը:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆՈՒՄՈՒՄ ԱՊՍՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՐԹԻ ՆԵՐԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ



Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն այցելել է Գավառի եւ Մարտունու բժշկական կենտրոններ առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ներքին գործընթացին տեղում ծանոթանալու նպատակով:

Կարեն Սարգսյանը հետեւել է ընթացիկ աշխատանքներին, բուժօգնության կազմակերպման գործընթացին, զրուցել առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի օգտվող քաղաքացիների հետ:

Մարզպետը կարելի է համակարգի դերը քաղաքացիների համար որակյալ, հասանելի եւ ժամանակին բժշկական ծառայությունների ապահովման գործում անկախ սոցիալական կարգավիճակից կամ բնակության վայրից:

Քաղաքացիները գոհունակությամբ են խոսել առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի մասին ընդգծելով, որ այն զգալիորեն թեթևացրել է բժշկական ծախսերի բեռը, բարձրացրել բուժօգնության մատչելիությունն ու վստահությունը առողջապահական համակարգի նկատմամբ: Նրանց խոսքով համակարգը նպաստում է ինչպես հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, այնպես էլ արդյունավետ բուժման կազմակերպմանը՝ ապահովելով սոցիալական արդարության եւ հոգատար պետության կարելի սկզբունքների իրագործումը:

«Գեղամա աշխարհ»

ԿԱՅԱՑՅԵԼ Է ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՋՐԱԿՈՎՉԱՑԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՆՍՏԸ

Կայացել է Գեղարքունիքի մարզային զորակոչային հանձնաժողովի 2026 թվականի առաջին նիստը, որը վարել է Գեղարքունիքի մարզպետ, մարզի զորակոչային հանձնաժողովի նախագահ Կարեն Սարգսյանը:

տումների հետ կապված հարցերը: Ձեկուցվել է, որ զորակոչում ներգրավված բոլոր կառույցների միջև համագործակցությունը գտնվում է բարձր մակարդակի վրա, իսկ ձմեռային զորակոչն ընթանում է բնականոն ընթացքով՝ առանց խոչընդոտների:



Նիստի ընթացքում քննարկվել են նաեւ վարժական հավաքների վերաբերող հարցեր, որոնց կարգավորման ուղղությամբ Գեղարքունիքի մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահ, մարզպետ Կարեն Սարգսյանը տվել է համապատասխան հանձնարարականներ:

Տիգրան Հակոբյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ-2026» ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆՍՏԸ



Գավառի համայնքապետարանում կայացել է «Մասնակցային բյուջե տավորում» գործընթացի առաջարկների նախնական գնահատման նիստը, որը վարել է գնահատող հանձնաժողովի նախագահ, Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը:


Գնահատող հանձնաժողովին, որի կազմում ընդգրկված են նաեւ համայնքապետարանի, ՀԿ-ների, ավագանու, մշտադիտարկում իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ, Գավառում գործընթացի պատասխանատուները համայնքապետարանի աշխատակիցներ Հակոբ Սարգսյանը եւ Դոնիսիմե Զանգիզորյանը ներկայացրել են գործընթացի բովանդակությունը, առաջարկների ընդհանուր նկարագիրը, որին հաջորդել են նախաձեռնությունների մանրամասն ներկայացումները:

Այս տարի Գավառ քաղաքից եւ բնակավայրերից ներկայացվել են ինը ծրագրային առաջարկներ, որոնք ուղղված են համայնքային զարգացման տարբեր ոլորտներին. դրանք մշակութային, կրթական, մարզական, ենթակառուցվածքային եւ հանրային միջավայրի բարելավման նախաձեռնու-

թյուններ էին: Նախնական գնահատման փուլն իրականացվել է հաստատված ընթացակարգերին եւ մասնակցային բյուջե տավորման ուղեցույցի պահանջներին համապատասխան: Հանձնաժողովի կողմից հավանության արժանացած եւ հանրային լսման փուլ անցած առաջարկները կներկայացվեն ավագանու հաստատմանը, որին կհաջորդեն հանրային քննարկումներն ու քվեարկությունը:

Ալվարդ Մանուկյան

ՎԱՅՐԱԿ, ԲԱՅՑ ՇՐԵՒԱՇՈՒՄ ՈՒ ԱՌԻՐ ԽԱՎԱՇԻ ՎԱՅՐԸ



Վայրը էջ 1-ում/

Եկեղեցին ունեցել է երկու մուտք, որոնցից մեկը բացվել է հյուսիսային, մյուսը՝ արևմտյան կողմից: Շքանուտքը եղել է արևմտյան կողմից ու բացվել գավթի մեջ: Աղոթարարի չորս անկյուններում երկհարկ ավանդատներ են, որոնց առաջին հարկերը գրեթե ամբողջությամբ պահպանված են, իսկ երկրորդ հարկի պատերը պահպանված են մեկ-երկու շարքով: Արևմտյան ավանդատան երկրորդ հարկ տանող սանդուղքները կառուցված են պատից ելուստ ունեցող, պահուսակային աստիճաններով: Արևելյան խորանների երկրորդ հարկերի մուտքերն ավագ խորանի երկու կողմերից են: Եկեղեցու ներքին հարդարանքը մշակված է եղել ճարտարապետական ու քանդակագործական բարձրաճաշակ հմտությամբ:

«Չայ արվեստին հատկանշական գերագույն առանձնահատկությունն իր դրսևորումն է գտել նաև այստեղ: Քանդակագործների, եւ առհասարակ, հարդարանքի մանրամասները երբեք չեն կրկնվում, այլ լրացնում, հարստացնում են իրար ստեղծելով մեծ արվեստով եւ արտահայտչականությամբ կատարյալ ամբողջություն: Եկեղեցու ներսում իշխողը հարդարանքն է հյուսիսային եղանակների բազմազանությունն է: Դա երեւում է փլատակների ճարտարապետական այն մանրամասներից, որոնք պատկանում են գմբեթին եւ թմբուկին: Այստեղ առկա են ուղղահայաց իջնող պարզ գաղղերը փնջածե ծանրացած գարդաքանդակներով գոտիները, որոնք ասես վերից իրենց մեջ են ամփոփել եկեղեցու կենտրոնական մասը... Խաչաթելերի վրա բարձրացող կամարները եռաստիճան են: Վերինը հարդարված է եղել յուրօրինակ գարդով: Կամարաթռիչքները խաչի անկյուններում հենվում են հին կիսասյուներից բաղկացած սյունափնջերի վրա: Ընդ որում, կիսասյուներից կենտրոնականի վրա է հենվել վերին կամարաշերտը, որի անկյունը մշակված կիսազվանցի տեսք ունի: Առավել մեծ կիսազվանցների տեսք ունեն ծայրերի կիսասյուները: Կամարների հիմքերից կազմված անկյուններում բուսական գարդաքանդակներ կան: Անկյան նեղացող մասը պսակվում է արմավենիներից հյուսված նուրբ ցանցագարդով, որը դեպի վեր շարունակվելով՝ ավարտվում է ութ պսակաթերթից կազմված վարդյակով: Թեւերն ավարտվել են արմավենագարդերով: Դրանք իրենց խորհրդաբանությամբ առնչվում են Կենաց ծառին, որը լայն կիրառություն ունի որք քրիստոնեական արվեստում: Այդ գարդաքանդակների կենտրոնական հատվածում տեղադրված է եղել առյուծի ընդգծված ռելիեֆ գարդաքանդակը: Պեղումներով հայտնաբերվել են առագաստներում գետնեղված գարդաքանդակները՝ եզան գլխի, արծվի, խաչերի եւ վարդյակների քանդակների տեսքով: Տաճարի բազմանիստ թմբուկը ներսից կլոր է եղել: Ութ զույգ կիսասյուների միջոցով այն բաժանված է եղել ութ մասի: Կիսասյուներն ավարտվել են խոյակներով, որոնց վրա ելուստավոր կամարներ են դրվել»,- նկարագրում են գրքի հեղինակները:

Շատ երեւելի տեսք ունի նաեւ բեմառէջքը, որը գարդարում են 13 կամարախորշերը: Յենց այստեղ էլ, եկեղեցուց որոշակիորեն լավ պահպանված հատվածում, կարողացվում է այն հոյակապ կառույցի ճարտարապետի անունը՝ ՅՈՒՎԱՍՏԱՆԻ: Սա այն փառավոր մարդն է, ով իր մտքի փայլատակունով արարել ու կերտել է միջնադարյան հայկական ճարտարապետության գոհարներից մեկը:

Տաճարի գմբեթը լուսավորվել է թմբուկի նեղ, երկար ու կլոր քանդակագարդ լուսամուտներից, որոնք արտաբուստ ունեցել են շքեղ գեղարվեստական հարդարանք: Խաչաթելերը եւս ընդգծվում են ոչ այնքան խոր եռանկյուն որմնախորշերով: Տաճարը դրված է երկաստիճան որմնախորշի վրա: Տաճարի հյուսիսային ու հարավային ճակատները մշակված են եղել իրար նման հնգակյան խուլ կամարներով: Կենտրոնական, առավել խոշոր ու բարձր կամարների վեր կերտողներն են եղել խիստ ընդգծված, խոշոր, կիսաբլուր խաչաքանդակներ: Խաչի թելերի մակերեսները հարդարված են ցորենի հասկ հիշեցնող գեղեցիկ, կիսաբլուր քանդակներով, որոնք իշխում են սրահի ճակատների վրա: Կենտրոնական խոշոր այսպիսի կամարների ճակատ-

ներում բացված են նեղ լուսամուտներ՝ քանդակագարդ լայն երեսակներով: Յինգ խուլ կամարներով է հարդարված եղել նաեւ կառույցի արեւելյան ճակատը: Կենտրոնականը բարձր է եւ իր մեջ է ընդգրկել նեղ, ընդգծված լուսամուտը: Երրորդ եւ չորրորդ կամարների ներսի տարածություններում փորված են կիսաշրջան որմնախորշեր, որոնց վերնամասերը մշակված են հովհարածե գարդաքանդակներով: Մեծ կամարներից հարավային կողմի ներսում, լուսամուտի պսակի գարդի վեր, քանդակված է արեւի ժամացույց, իսկ հարավային ճակատի նույն տեղում երեւում է հավերժության նշանը, որը կրկնված է նաեւ կամարը եզրափակող մեծ խաչի վերին խաչաթելին:

Եկեղեցու խաչաթելերի ծայրերին՝ ճակտոնապատերի անկյուններից վեր, դրված են եղել հուշարձանի մանրակերտներ, որոնցից երկուսն են հայտնաբերվել պատրաստված կրաքարից:

Այլ խոսքով, համաչի վանքի կառուցումն արդյունք է ճարտարապետական հզոր գիտելիքների, երկրաչափական ու մաթեմատիկական գերճշգրիտ հաշվարկների, քանդակագործական արվեստի ու գեղագիտական բարձր ճաշակի կիրառման, որոնք այստեղ օգտագործվել են անսխալ ու անշեղ կերպով:

Բնական է, որ այսպիսի մտահղացումը երբեք ու երբեք չի պատկանել վրանաբնակ քոչվոր ցեղերին, որոնք միայն զբաղված են եղել խաղաղ պետությունները կործանելով ու կողոպտելով, քաղաքակրթություններն ու դրանք կրող ժողովուրդներին բնաջնջելով, իսկ այսօր նրանց գարմերը նույն մոլեգնությամբ, կեղծավորությամբ ու անամոթությամբ փորձում են իրենցով անել նաեւ ճարտարապետական ու քանդակագործական արվեստի գլուխգործոցները, դրանց կերտողներին: Չայատառ վիմագիր արձանագրություններն անգամ պատմամշակութային արժեքները կողոպտող ելուզակների համար հիմք չեն հանդիսանում, թե իրականում որ ժողովրդի մտքի ու ստեղծարար ձեռքերի արդյունքն են Ամարասի, Գանձասարի, Դաղիվանքի, համաչի վանքի, Ամբերդի, մյուս հուշարձանների կերտումները:

ՍՈՒՐԸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՂԱՐՎԵՏՍԱԿԱՆ ՉՐԵՒԱՇՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Իսամչի վանքի կառուցումը հովանավորող աշխարհիկ ու հոգեւոր տերերի, ճարտարապետների, շինարարների ու քանդակագործների կողմից արվել է հնարավորը, որպեսզի այս կառույցը մի կողմից իր տեսքի մեջ լինի բացառիկ ու վեհաշուք, մյուս կողմից էլ մրցակցել կարողանա կամ երեւելի տեսք ունենա իր ժամանակի կամ նախորդ ժամանակներում կերտված պատմաճարտարապետական այլ հրաշալիքների կողքին, որոնք առկա են եղել ոչ միայն Չայաստանում, այլ նաեւ նրան շրջապատող երկրներում: Ու դա նրանց գերազանցապես հաջողվել է:

Իսամչի վանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ըստ հեղինակների կարծիքի, իր ճարտարապետական գուսպ ձեւերով ու գեղարվեստական շքեղ հարդարանքով համարվում է հայ միջնադարյան եկեղեցաշինության բարձրագույն նվաճումներից մեկը, իսկ նրա գմբեթն իրավամբ կարելի է համարել հայ քանդակագործական արվեստի լավագույն նմուշներից: Դասական օրինակ է եկեղեցու թմբուկը, որի կլոր պատուհաններից մեկի շուրջըլորը քանդակված է եկեղեցական, ծիսական արարողությունների ժամանակ կիրառվող ունեցող երաժշտական գործիքը, որը կոչվում է Քշոց: Քանդակն աչքի է գարնում ոչ միայն գործիքի ռեալ պատկերով, այլեւ քանդակային վերարտադրության բարձր մակարդակով:

Երեւելի են նաեւ արծիվ եւ կաքավ հիշեցնող թռչունների պատկերաքանդակները, որոնք լայնորեն տարածված են հայկական եմեղեցական քանդակային հարդարանքում, որն ավանդվել է դեռեւս 10-րդ դարից: Դրանք խորհրդանշում են Դրախտային պարտեզը եւ առնչվում են գմբեթի ու թմբուկի խորհրդաբանական պատկերացումներին: Գմբեթի թմբուկների գարդաքանդակների շարքում հատուկ ուշադրության են արժանի ճակտոնապատերի տակ գտնվող եռանկյունաձեւ տիմպանները, որոնք բոլորն էլ ծածկված են իրար չկրկնող երկրաչափական ու բուսական հետաքրիր գարդաքանդակներով ու հիացնում են իրենց բարձր արվեստով:

Ճարտարապետը եւ քանդակների հեղինակները շքեղ ձեւ են տվել դեպի երկինք ձգվող գմբեթին, ինչի արդյունքում էլ ստեղծվել է բացառիկ ու անկրկնելի կոթող: Եկեղեցու գմբեթն ունեցել է 16 նիստ իր կերպով հիշեցնելով Չառիճավանքի եւ Գանձասարի վանքի Կաթողիկե եկեղեցիների գմբեթները: Գմբեթի նիստերն ավարտվում են անկյունաձեւ վերնաճակատներով, որոնցից յուրաքանչյուրի անկյունը կրում է կրնաձեւ սալապատ ծածկ վերջինիս տալով հովիտի տեսք:

«Տաճարի գմբեթը, հուշարձանի պսակը հանդիսանալով հանդերձ, եղել է նաեւ նրանից վեր խոյացող առանձին դիտվող մի հորինվածք, որի վեհությունն ընդգծվել է ոչ միայն նիստերի ուղղահայաց բաժանումներով, այլեւ կողերին բարձրացած երեքական կիսասյուների համարությամբ մշակված սյունափնջերով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր յուրօրինակ խարիսխը եւ խոյակը: Գմբեթի թմբուկի վեհությունն ու մասնատվածությունն ընդգծվել են նաեւ


նիստերը ձեւավորող որմնախորշերով եւ սքանչելի գարդաքանդակներով: Այս ամենը, բացի իրենց ունեցած որոշակի դերից, ստեղծել են լույսի եւ սուվերի հետաքրքիր մի համադրություն, որով ավելի ցայտուն է դարձել թմբուկի հարդարանքը: Առկա մանրամասներից դատելով՝ ճարտարապետ Չովասաբը կատարել է նիստերի հստակ բաժանում: Չորս նիստերի մեջ բացված են նեղ, երկար լուսամուտներ՝ եզրերի հետաքրքիր եզրագոտիներով: Պատուհանների պսակները լայն են, ծածկված մեծ վարպետությամբ աչքի ընկնող բուսական եւ երկրաչափական գարդաքանդակներով: Գմբեթի մյուս գարդաքանդակները չեն կրկնվում, հատկանիշ, որը բնորոշ է Չայաստանի ոչ միայն ճարտարապետական հուշարձաններին, այլեւ կիրառական արվեստի ստեղծագործություններին, բազմահազար խաչքարերին»,- նկարագրում են հեղինակները:

Թմբուկը տաճարից բաժանող նրբաքանդակ գոտին հարդարված է եղել բուսական գարդաքանդակների գեղեցիկ հյուսքով: Իսկ թմբուկի քանդակագործական հարդարանքի ամենակնառու մասը կազմել են նիստերի եւ ճակտոնների պատկերաքանդակները:

Գմբեթի թմբուկի նիստերից մեկում վերարտադրված է հնգաթեւ աստիղ մեծադիր քանդակը, որը մասերի է բաժանվել եկեղեցու խորարհվելու հետեւանքով: Պեղումներով հայտնաբերվել են այս անգուգական քանդակի գրեթե բոլոր մասերը, որոնցով ամբողջանում է գմբեթի այս նիստը հարդարող կարեւորագույն տարրը: Նմանատիպ նիստերից մյուսի մակերեսը գարդարում է վեցթեւանի աստղ պատկերող քանդակը:

Գմբեթի թմբուկի հարավային նիստից աջ եւ ձախ գտնվող նիստերի որմնախորշերում քանդակագործը տեղավորել է պատկերաքանդակներ: Արեւմտյան թեւի վրա եզան գլուխներ են քանդակվել, իսկ մյուս թեւերը հարդարվել են թռչնաքանդակների եւ երկարչափական այլ քանդակներով: Լուսամուտներից մեկի երկու կողմերում թեւատարած արծիվների քանդակներ կան, որոնց բելորներն ի հայտ են եկել պեղումների ժամանակ: Պեղումների շնորհիվ հայտնաբերվել է նաեւ խաչը պահող գնդաձեւ խաչաթռը:

Հուշարձանը պեղած հնագետների կարծիքով՝ մի եզակի իրողություն է հայտնաբերվել գմբեթարարի արեւմտյան պատի գետնախարսխին անմիջապես հաջորդող պատաշարում, որտեղ որմնադիրը, քարերը շարելուց եւ պատը հարդարելուց առաջ, սրբատաշ քարերի հերթականությունը պահպանելու հա-



մար դրանք համարակալել է հայերեն գլխատառեր-կաթագրերով Ա-ից մինչեւ Ժ-ն, որոնք արտահայտում են մեկից տաս թվերը: Նման բան այլեւս չի հանդիպում ինչպես վաղ միջնադարի, այնպես էլ Չայաստանի 9-14-րդ դարերի հուշարձանների որմերին: Շքեղորեն է կերտվել տաճարի արեւմտյան որմը, որի կենտրոնում կառույցի շքանուտքն է կազմված չորս զանգվածեղ որմնասյուներից, որոնք պսակվել են երկու քանդակագարդ կամարներով: Դրանք ունեցել են գլանաձեւ գարդաքանդակներ, որոնց վերին եւ ստորին մասերն ավարտվում են որմնափնջերով: Կենտրոնական որմնասյուների վրա գետնեղված է եղել հինգ քարից կազմված մուտքի բարավորը: Երկու կողմերում որմնասյուների միջեւ շարված են եղել կնանչ եւ դեղին քարերով ռոմբաձեւ փոքր սալիկներ, որոնք առանձնակի տեսք են հաղորդել շքանուտքին:

Դժվար չէ կռահել, թե ինչ միտք ու ջանք են թափել հուշարձանի պեղումներով ու ուսումնասիրություններով զբաղված անձինք՝ իրար համադրելով գտնված յուրաքանչյուր քարաթելի ու քանդակ, ամեն մի մանրուք, մինչեւ որ ամբողջացրել են իսամչի վանքի ամբողջական տեսքի կամ վերականգնման գծապատկերը: Դա, թերեւս, գրեթե հավասար էր նման մի հուշարձանի հիմքից կերտելու աշխատանքին:

Գրքում գետնեղված են ճարտարապետ Մ. Դանիելյանի չափագրությունները, Յ. Կարախանյանի ու Ս. Աղայանի գծանկարները, Յ. Մելքոնյանի, Կ. Եղիազարյանի ու Յրայր Բագեի լուսանկարները, որոնց շնորհիվ ընթերցողը կարողանում է հաղորդվել իսամչի վանքը կերտող համաճարների հոյակերտ մտահղացումներին, անկրկնելի կերտվածքներին, միջնադարյան հայկական ճարտարապետության գոհարներից մեկի ճարտարապետաաշինարարան, քանդակագործական ու գեղագիտական հզոր արժեքներին:

/Չարունակությունը էջ 5-ում/

ՎԱՆՐԱԿ, ԲԱՅՑ ԵՐԵՂԱՆՈՒՄ ՈՒ ԱՌԻՐ ԽԱՎԱՆԻ ՎԱՆՔԸ



ագրավ ճարտարապետական մանրամասներ պատուհանների պատյալ տաճակ պատկերներ: Եկեղեցու պեղումներով հայտնաբերվել են բազմաթիվ կղմի դրոներ, որոնց թվում ունի ճարտարապետական ստոր գործիքով փորագիր արձանագրությունները երկթեք կղմի դրոն օրհնակը:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց շուրջ 100 մետր հեռավորությամբ է գտնվում փոքր եկեղեցին, որը ուղղանկյուն հակատափով, կիսակործան շինություն է՝ 9-11-րդ դարերով թվագրվող: Փոքր եկեղեցու պեղումների արդյունքում արեւմտյան պատի հատվածում գտնվել են 12-14-րդ դարերի մեծ թվով խաչքարեր ու բեկորներ ու գերեզմանաքարեր, որոնցից մի քանիսն ունեն պարանահյուս զարդերից, որն առավելապես բնորոշ է նույն դարաշրջանների գերեզմանակոթողներին: Փաստագրվել են նաև եկեղեցու ու-

ղջ բաղկացած է նաև գավիթից, որը կառուցվել է շատ ավելի ուշ, հավանաբար, տաճարի կառուցումից մի քանի տասնամյակ անց, կոպտատաշ բազալտով, 12 մետր լայնությամբ ու նույնքան էլ երկարությամբ: Բնական է, որ անշուք այս կառույցը մի տեսակ ստվեր է նետում տաճարի չափազանց շքեղ տեսքի վրա: Գավիթը եւս ավելի վիճակում է, որի պատերը կանգուն են մնացել մոտ 2 մետր բարձրությամբ: Այն ներքուստ ու արտաքուստ հարդարվել է 9-12-րդ դարերով թվագրվող խաչքարերով, որոնք տեղահան են արվել մոտակա միջնադարյան գերեզմա-


նոցից ու ամենատարբեր դիրքերով, ներքուստ, թե արտաքուստ, գետնովել գավթի որմերին: Գավթի հյուսիսային եւ հարավային մուտքերը եւս հարդարվել են մեծ չափերի գեղաքանդակ խաչքարերով: Մուտքերը երկու կողմից են, քանի որ դրանցից հարավայինը բացվում է դեպի բլրի վրայի տապանատուն, իսկ հյուսիսայինը՝ վանական համալիրի բակ:

Խամշի վանքն ունեցել է նաև օժանդակ շինություններ ու միաբանության խցեր, որոնք գտնվում են տաճարի հյուսիսակողմում, 70-100 մետր հեռավորությամբ: Մենաստանի բնակելի սենյակները, կառուցված բազալտե կոպտատաշ քարերով, չափերով փոքր են: Խցերի քանակը հուշում է, որ վանքի միաբանները բավականին շատ են եղել: Վանքի շրջակայքում կան խցերի անհամեմատ ավելի մեծ սենյակներ, որոնք առնչվել են գործատների արվեստանոց-գրչատների հետ:

Խամշի վանքից մոտ 100 մետր հե-

ռավորությամբ պահպանվել է մեծ չափերով ու 7 մետր խորությամբ միջնադարյան հորը, որը կառուցվել է բազալտի քարերով ու երեսապատվել կիր ու ավազի հաստ շերտով: Այն ծառայել է հացահատիկ կամ ընդեղեն, մթերքներ ամբարելու նպատակով: Մենաստանից ավելի քան 200 մետր դեպի հյուսիս հայտնաբերվել են սրբատաշ, բազմերանգ քարեր, որոնք վերաբերում են Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարին:

Խոսքով Խլղաթյան /շարունակելի/



ՎԵՐՈՆԱՅԻ ԼՈՒՄԻՆԱ ԱՅԼԵՎՍ ՉԱՍՎԱԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՄԻ...

Սոլյանան քայլում էր զգույշ, ասես վախենում էր, որ քարե մայթերը կճաքեն իր քայլերի տակ ու դուրս կգան անցյալի ծայրերը: Վերոնան լուռ էր, բայց այդ լուռության մեջ խոսում էին պատուհանները, կամարներն ու ժամանակից մաշված պատերը: Այստեղ ամեն ինչ սիրո էր սնան, բայց ոչ այն երջանիկ ավարտներով, որոնց հավատում են երեխաները:

Նա քայլում էր ու զգում, որ սիրտը ծանր է, ինչպես քաղաքի հին կամուրջները: Մի ժամանակ այստեղ հավատացել էր, որ սերը, եթե իրական է, պարտադիր պիտի փրկի: Իսկ հիմա գիտեր՝ իրական սերը նույնպես կարող է հեքիաթ դառնալ, եթե աշխարհը չի տեղավորվում նրա մեջ:

Չուլիետի պատշգամբի տակ կանգ առավ: Վերեւ նայեց, ու մի պահ թվաց սերն այնտեղ դեռ սպասում է, նույնքան մաքուր ու անպաշտպան: Բայց հետո քանին շարժեց օդը, ու նա հասկացավ՝ սերը չի մեռնում, պարզապես փոխում է հասցեն: Երբեմն ապրում է հիշողության մեջ, երբեմն՝ ցավի, երբեմն էլ՝ պատմության գրքերում:

Նա շարունակեց քայլել՝ արդեն առանց շտապելու: Որովհետեւ Վերոնայում նա թողեց ոչ թե սերը, այլ իր այն հավատը, որ ամեն հեքիաթ պիտի երջանիկ ավարտ ունենա:

Ու դա էլ էր մի տեսակ ազատություն: Արեւի պես էր արեւի նման մազերով, որոնք ասես շողեր էին արձակում ու մեկ-մեկ գալարվում էին նրա գլխի վրա: Նրա աչքերը կանաչ էին, ինչպես զարման մարգագետինը՝ դեռ անձրեւի հոտը չկորցրած:

Սոլյանան չէր սիրում աղմուկը: Նա սիրում էր այգաբացներն ու մայրամուտները: Այդ ժամերին նա նստում էր պատուհանի մոտ, ու արեւը, կարծես ճանաչելով իր անունը, երկար մնում էր նրա դեմքին: Եվ այնպիսի տպավորություն էր, որ եթե աղջիկը ժպտա այդ պահին, ուրեմն հեքիաթը դեռ շարունակվում է:

Մոտ տասնհինգ տարի առաջ էր: Ոսկեծամ այդ գեղեցկուհին ուսանող էր եւ դեռ ապրում էր հայրենիքում: Աղջիկը ապրում էր հայրենիքի բնության, օդի, արեւի ու քրի հանդեպ սիրով եւ երբեւէ բաժանվելու ցանկություն անգամ չուներ ու երբեւէ չէր էլ մտածել, որ մի օր հեռու պիտի գնա նրանից: Նա չէր պատկերացնում, որ օրորոցից լսած լեզուն օտար հողի վրա կարող է խորթ դառնալ այնտեղ, ուր որ ինքն օտար չթվալու համար ստիպված կլինի խոսել այլ լեզվով:

Նրանց ընտանիքի շրջապատում մի մարդ կար՝ հոր ընկերոջ որդին. մարդ,



որի ներկայությունը նրան բառացիորեն խեղդում էր: Դա հանկարծակի զգված չէր, ոչ էլ անբացատրելի հակակրակ: Դա մտածված, գիտակցված զգված էր՝ այն տեսակից, որ չի գոռում, բայց անդադար ճնշում է ներսից: Նրան թվում էր՝ այդ մարդը նեղ է, ներսից կեղծ, լուսավորությունից զուրկ: Եվ նա դա չէր թաքցնում: Ասում էր ուղիղ, առանց շրջանցելու, առանց մեղմացնելու՝ հենց այնպես, ինչպես զգում էր: Նրան թվում էր, որ այդ երիտասարդի ստոր տեսակը խանգարում է իրեն եւ նրա պատճառով չի կարողանում վստահել ու հավատալ ուրիշներին: Բայց ամենազգացվալից նրա ներկայությունը չէր: Ամենազգացվալից այն էր, որ հայրը վստահում էր: Այդ վստահությունն խոցում էր աղջկան ամենախորը ձեւով: Ոչ մի բան այնքան չէր ցավեցնում, որքան այն գիտակցումը, որ իր հայրն այդ մարդու մեջ տեսնում էր այն, ինչ ինքն ամեն գնով չէր տեսնում, չէր էլ ուզում տեսնել: Եվ Սոլյանան ստիպված էր հանդուրժել մի մարդու, ում մեջ ոչ մի լույս չկար, բայց ում նկատմամբ իր հոր վստահությունը անսասան էր: Այդ տղայի անունը Ռոման էր: Նրա ծայրը մի տեսակ զրնգում ու կոպիտ էր, ասես խոսելիս շեշտը դնում էր բաղաձայնների վրա: Նրա աչքերը տարբեր գույն ունեին, եւ Սոլյանան երբեմն մտածում էր, որ այդ երկերեսիությունն ինչպես հոգում, այնպես էլ մարմնում էր արտացոլվել: Բարձրահասակ էր, համակրելի արտաքին ուներ, այնպիսի տեսք, որ առաջին հայացքից վստահություն էր ներշնչում: Բայց աղջկա համար նա երբեք գեղեցիկ չէր թվացել: Որովհետեւ

գեղեցկությունը նրա համար սկսվում էր ներսից, իսկ Ռոմանի հոգին հակառակն էր թվում տօգել, խամրած, անհամադաս:

Սոլյանան զարմանում էր, թե ինչպես կարող են մարդիկ չտեսնել այն, ինչ ինքն այդքան պարզ էր տեսնում, ինչպես կարող են խաբվել արտաքին հանկարծանքով ու աչքերի տարբեր գույնը շփոթել յուրահատկության հետ, մինչդեռ ներսում ապրում էր մի բան, որ իրեն վանում էր:

Մի օր Ռոմանը օգնության կարիք ուներ: Նա գրեց Սոլյանային առանց խնդրելու, առանց հարցնելու, գրեց այնպես, ասես դա բնական էր, ասես իրավունք ուներ: Լավ իմանալով, որ Սոլյանայի համար դժվար է լինելու օգնել մեկին, ունից այդքան խորշում էր: Եվ հենց այդ գիտակցված դժվարության մեջ էր նորից նույնը նույն լուռ ներխուժումը, նույն սահմանների անտեսումը:

Նա երկար նայեց հաղորդագրությանը: Ոչ թե որովհետեւ չէր հասկանում ինչ անել, այլ որովհետեւ հասկանում էր շատ լավ: Որ այստեղ խոսքը օգնության մասին չէր: Այստեղ խոսքը կրկին իր սահմանների փորձարկման մասին էր:

Սոլյանան շատ զայրացավ ու նամակը ցույց տվեց հորը այն հույսով, որ այս անգամ հայրը կհասկանա իրեն: Գոնե մեկ անգամ Ռոմանին կնայախոսի, կասի, որ ստոր ձեւով փորձում է ներխուժել նրա հանգիստը, նրան հունից հանում է: Նա չէր սպասում պաշտպանություն, այլ որ հայրը տեսնի այն, ինչ ինքը վաղուց էր տեսել: Բայց հայրը նամակը կարդաց հանգիստ, շատ հանգիստ, աչքերը չխստացան, ծայրը չփոխվեց: Մի փոքր լռեց, հետո նույն տոնով ասաց:

«Դե մարդ է, օգնություն է խնդրում, մի եղիր եսասեր, օգնիր, էլի: Այդ խոսքերը աղջկա վրա ծանր նստեցին: Իր սահմանները կրկին մնացին անտեսված: Սոլյանան լռեց: Նա զգաց ու հասկացավ, թե որքան միայնակ կարող է լինել ճիշտ լինելը:

Աղջկա հայրը ոչ այնքան բարձրահասակ էր, սեւ մազերով, բծախնդիր ու խիստ մարդ: Նրա խստությունը աղմուկ չէր սիրում. այն նստած էր շարժումների մեջ, խոսքի կշռի, լուռության ճիշտ պահի մեջ:

Սոլյանան հազվադեպ էր իր հույզերը ցույց տալիս հորը, որովհետեւ նրանց միջեւ կար չասվածի համաձայնու-

թյուն. զգացմունքները պարտադիր չէ բարձրաձայնել, երբ դրանք արդեն հասկացված են: Եվ հայրը, թեւ երբեք դա չէր արտահայտում բառերով, ներսից միշտ հասկանում էր նրան:

Նա գյուղական հասարակ կյանքով ապրող մարդ էր: Արդար քրտինքով ապրող, հողի, աշխատանքի ու պատասխանատվության օրենքներով ձեւավորված: Բայց այդ պարզության մեջ երբեմն կար նաև ճիշտությունների հանդեպ սովորություն, այն տեսակ ոչ աղմուկոտ ճիշտությունը, որ գալիս է երկար զրկումներից հետո: Հայրը սիրում էր լավ սեղան, մաքուր հագուստ, կարգ ու կանոն: Երբեմն այն, ինչ նա տեսնում էր որպես համեստություն ու ջանք, աղջիկը զգում էր որպես կեղծ շերտ: Եվ այդ տարբերությունը եւս նրանց միջեւ թեւ չդարձավ հակամարտություն, բայց միշտ մնաց լուռ հեռավորություն:

Երբ Ռոմանը հայտնվեց այդ աշխարհի մեջ, այդ տարբերությունը, կարծես թե, ենթարկվեց փորձության:

Նա չմտածեց հորը եւ արեց նրա ասածով: Սկզբում պատասխանեց սառը կարծ ու կոնկրետ: Սակայն խոսակցությունը կանաց-կանաց երկարեց. սկզբում օրեր, հետո շաբաթներ ու ամիսներ, եւ նրանց միջեւ մի տեսակ կապվածություն ծնվեց: Աղջիկը բացահայտեց, որ Ռոմանը շատ խելացի մարդ է, եւ ինքը, թերեւս, այդքան ժամանակ սխալվել էր նրա հարցում: Սոլյանան ու Ռոմանը երբեք անիմաստ թեմաներ չէին կիսում: Նրանց խոսակցությունները չէին երկարում ժամանակ սպանելու համար: Դրանք երկարում էին, որովհետեւ իրենց մեջ խորհուրդ էին կրում:

Յուրաքանչյուր բառ ինչ-որ բան էր ասում, ինչ-որ բան էր բացում, ինչ-որ բան էր տեղաշարժում ներսում:

Մի անգամ Ռոմանը նրան ասաց, որ կարդա Ֆյոդոր Դոստոևսկու «Ռճիր եւ պատիժ»-ը: Սոլյանան կարդաց այն սպասումով, որ գրքի էջերի մեջ կգտնի մի բան, որը կսալ ունի իրենց միջեւ գոյացած անտեսանելի կապի հետ: Որ այնտեղ, տողերի արանքում, ինչ-որ կերպ կճանաչի իրեն ու նրան:

Հետո Ռոմանը բացատրեց գլխավոր իմաստներից մեկը.

«Նպատակը արդարացնում է միջոցները»:

Սոլյանան սկսեց մտածել, որ զուցե նրա նպատակը իրեն հասնելն էր, եւ բոլոր միջոցները պիտի արդարացված լինեին: Իսկ իր սե՛րը... Նպատակ էր, թե՛ միջոց: Այդ հարցը երկար ժամանակ իր ներսում անպատասխան մնաց: Եվ հենց այդտեղ էլ, թերեւս, նա սխալվեց:

/շարունակությունը՝ էջ 6-ում/

ՎԱՐՂԵՆԻՍ ԶԱՄԱՅՆՔԻ ԾԱՏՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԾՆՎԵԼ Է ԱՎԵՏԻՍԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ 10-ՐԻ ԵՐԵՒԱՆ

Հունվարի 29-ին Վարդենիսի բժշկական կենտրոնում լույս աշխարհ է եկել Վարդենիս համայնքի Շատվան գյուղի բնակիչներ Գայանե Հովհաննիսյանի եւ Ավետիս Ավետիսյանի ընտանիքի 10-րդ երեխան՝ 3530 զրամ քաշով եւ 51 սմ հասակով: Նորածինն աղջիկ է, ունի 4 եղբայր եւ 5 քույր: Նրան անվանակոչել են Անամարիա:



կուսը՝ Սիրունը եւ Սոֆին, ուսանողներ են. նրանք սովորում են Վարդենիսի պետական քոլեջում: Ավետիսը եւ Սարիբեկը հաճախում են Գեղամաբալկի հիմնական դպրոց: Իսկ Կարինեն, Անին, Բեկը եւ Անգելինան նախադպրոցական տարիքի երեխաներ են:

Այս ընտանիքի նախավերջին երեխան Անգելինան է, ով լույս աշխարհ է եկել 2024 թվականի դեկտեմբերին:

Ընտանիքի հայրը՝ Ավետիս Ավետիսյանը, առողջական խնդիրների պատճառով չի աշխատում, իսկ մայրը՝ Գայանե Հովհաննիսյանը աշխատում է գործատու որպես մաքրուհի:

«Գեղամա աշխարհ»

ՎԵՐՈՆԱՅԻ ԼՈՒՄԻՆԵ ԱՅԼԵՎՍ ՉԱՄՎԱԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ...

Ակիզքը էջ 5-ում/

Սուլանան ուզում էր հասկանալ, թե ինչ երաժշտություն է սիրում Ռոմանը: Որ կարողանա մեղեդու տեսքով երագել նրա մասին, հպել նրան իր սրտի լարերին: Երբ Ռոմանն ասաց, որ դասական երաժշտություն է սիրում, աղջկա հիացմունքը կրկնապատկվեց: Դասական երաժշտության մեջ նա սկսեց տեսնել Ռոմանի տրամաբանությունն ու իմաստությունը:

Երաժշտությունը հաճախ դառնում է այն կանուրջը, որով զգացմունքները ավելի համարձակ էին քայլում:

Ռոմանի ծայրը, նրա բառերը, նրա մտածողությունը հպվում էին նրբագագաց աղջկա հոգուն ու որոնցից հետո մարդը այլևս նույնը չի մնում:

Ռոմանը այն մարդն էր աշխարհում, ով նրան ամենավաղ էր հասկանում: Նա հասկանում էր Սուլանային դեռ մինչև նա կհասցներ ասել: Ռոմանը սովորեցրեց զգույշ լինել բառերի մեջ, սովորեցրեց մտածել, հետո խոսել, սովորեցրեց, որ յուրաքանչյուր ասված խոսք պիտի ունենա իր ծանրությունը, իր հիմնավորումը, իր պատասխանատվությունը: Նա նրան շատ բան էր սովորեցրել: Եվ այդ «շատ»-ը չէր չափվում փաստերով, այլ փոխված ներքին կառուցվածքով:

Մի քանի ամիս այդպես շփվեցին: Խոսքերը նրանք միջև երբեք դատարկ չէին: Երբեք անիմաստ թեմա չկար: Այդ տղայի խելքը աղջկան բարձրացնում էր, ձգում վերել: Նրա հետ խոսելիս Սուլանան իր նման չէր, ասես փոխվում էր ու դառնում էր ավելի իրական, քան միշտ եղել էր: Նա սկսում էր դառնալ նրան նման ավելի կենտրոնացած, ավելի խորը, ավելի ճշգրիտ:

Մի օր ինչ որ բան էր պատահել էր արեւի նման աղջկան տխուր էր: Ռոմանը հարցրեց՝ ոնց է: Նա ասաց ու հանկարծ լաց եղավ՝ առանց պահելու, առանց ամաչելու: Ռոմանը ասաց, որ այլևս չլացի, որ իրեն չի կարելի արցունք թափել:

Սուլանան կիսաժպիտով, կիսալացով պատասխանեց.

- Ինչի՞: Արցունքս աղամանդ չի, որ ընկնի հատակին ու փոշոտվի:

Ռոմանը պատասխանեց այնպես, որ այդ խոսքը մնաց Սուլանայի ներսում տարիներով.

- Քո մի կաթիլ արցունքը հազար ոսկու հետ համեմատել չի լինի:

Նա, իհարկե, շոյված էր: Բայց դա միայն շոյանք չէր: Դա մի կետ էր, որից հետո նա այլևս չէր կարող նրա մասին չմտածել: Նա զգում էր սիրում է նրան: Կյանքում առաջին անգամ նա մեկին սիրում էր առանց հաշվարկի, առանց ապահովագրության, առանց ետդարձի:

Ռոմանի հետ զրույցները Սուլանային դարձնում էին ավելի լավ, եւ նա կարծում էր՝ դա սեր է: Նա հույսեր էր փայփայում, կարծում էր՝ նա էլ է սիրում իրեն: Չէ՞ որ այդպես են խոսում միայն նրանք, ովքեր զգում են:

Բայց մի օր Ռոմանը սկսեց հարցնել Սուլանայի ընկերուհիներից մեկի մասին: Սկզբում աննշան, իսկ հետո ասաց, որ անտարբեր չէ: Ավելի հետաքրքրված է եղել նրանով: Այդ պահին աշխարհը կանգ առավ իր ներսում: Անհնար է բացատրել, թե որքան

ցավեց աղջկա հոգին, որքան կոտրվեց այդ պահին, սկսեց արտասվել առանց շունչ քաշելու: Լացում էր այնպես, որ մարմինը չէր հասցնում հետեւել հոգուն: Նա այլևս իմաստ չէր տեսնում ապրելու մեջ: Պարզապես ամեն ինչ դատարկվեց այդ պահին:

Մի քանի օր նա չպատասխանեց տղայի նամակներին: Հետո գրեց: Ռոմանը, բնականաբար, զգացել էր: Գիտեր ինչու նա չէր գրում: Ոչ մի հարց չստաց:

Մեկ շաբաթ անց երկուսն էլ համալսարանի ավարտական քննությունն էին հանձնելու: Ռոմանը գրեց ու ասաց.

- Դու պիտի քսան ստանաս: Գերազանց: Որովհետեւ իրեշտակները գերազանց են ստանում:

Եվ Սուլանան... նորից շոյված էր: Ներսում նորից մի փոքր հույս ծնվեց: Այն վտանգավոր հույսը, որը արդեն մեկ անգամ իրեն կոտրել էր, բայց որից նա դեռ պատրաստ չէր հրաժարվել:

Սակայն տխրությունը դեռ Սուլանայի մեջ էր: Այն չէր անցել, չէր մարել, որովհետեւ նա գիտեր՝ Ռոմանը ուրիշի մասին է մտածել, գուցե էլի մտածի: Բայց այդ մտածումների մեջ արեւաբույր աղջիկը ավելի շատ իր վրա չէր կենտրոնանում: Երբ Ռոմանի քննությունները մոտեցան, նա Աստուծոց խնդրում էր միայն մեկ բան՝ որ տղան գերազանց ստանա իր քննությունը: Իր համար չէր աղոթում այլ նրա որովհետեւ երիտասարդը չէր հասցրել պարապել եւ որովհետեւ պիտի շուտով գնար երկրից: Կային կարելու գործեր, եւ տղան չգիտեր՝ որքան ժամանակ հետո կվերադառնա: Աղջիկը ուզում էր, որ գոնե այդ մի ծանրությունը նրա ուսերից հեռու լիներ:

Գրեթե ամբողջ գիշեր նա աղոթեց: Աղոթքի մեջ լաց էր լինում՝ ներսից քանդվող անընդհատ լացով: Ռոմանը գիտեր, որ Սուլանան շատ է մտածում իր մասին եւ հենց այդ գիշեր նամակ եկավ:

Նա գրեց. «Սուլանա, դու լուսին շատ ես սիրում: Դու սիրում ես նայել լուսնին: Դուրս արի, տես՝ ինչ սիրում է»: Ապա ավելացրեց. «Այն աղջկա՝ ընկերուհուդ մասին այլևս չեմ հարցնի: Գիտես ինչու... Որովհետեւ լուսինն այսօր շատ սիրում է, որովհետեւ դու լուսին շատ ես սիրում»:

Այդ նախադասության մեջ ամեն ինչ կար լռություն, խնայողություն, չասված խոստովանություն, բայց նաեւ փախուստ: Ռոմանը ընտրել էր գեղեցիկ լռությունը ճշմարտությունից:

Հաջորդ օրը նրանք քննություն հանձնեցին: Երկուսն էլ նույն գնահատականը ստացան: Սուլանան դա ընկալեց որպես իր աղոթքի պատասխան: Ռոմանը այլևս չխոսեց այն աղջկա մասին: Իսկ Սուլանան... ավելի շատ սկսեց սիրել նրա խելքը: Եվ նրան:

Մի ամիս անց Ռոմանը գնաց երկրից: Եվ կապը կորավ: Նա չէր գնա՞զում: Եվ նա լուր չունեց նրանից:

Անցան օրեր: Սուլանայի սիրտը գրաված տղայի ամենամոտ ընկերը սկսեց այլ կերպ նայել Սուլանային: Սկզբում՝ լռությամբ, հայացքներով,

որոնք երկար էին մնում, հետո՝ ակնարկներով: Իսկ մի օր ասաց ուղիղ որ անտարբեր չէ նրա հանդեպ: Ավելին ասաց, որ սիրում է նրան:

Սուլանան զայրացած էր: Ոչ միայն նրա վրա, այլ ամբողջ իրավիճակի: Նրան թվում էր՝ սա հեռվից հեռու խաղ է: Թվում էր՝ Ռոմանն է կանգնած դրա հետեւում: Թվում էր՝ նա փորձում է իրեն, չափում է իր զգացմունքները, ստուգում՝ մինչև ուր կարող է գնալ: Եվ հենց այդ կասկածի մեջ աղջկա ներսում ծնվեց մի որոշում, որը ոչ սրտից էր, ոչ խելքից: Դա վիրավորված հպարտության որոշում էր:

Նա որոշեց «պատժել»: Արդեն քանի գիշերներ կարոտից ու ցավից կուչ եկած աղջիկը ասաց, որ համաձայն է շփվել, ընկերություն անել նրա ընկերոջ հետ: Ասաց դա հանգիստ ծայրով, բայց ներսում ամեն ինչ ճշում էր: Նա կուրացած էր սիրուց, այն սիրուց, որը չի մտածում հետեւանքների մասին:

Կյանքում առաջին անգամ Սուլանան խոսք տվեց մի մարդու, ում հանդեպ ոչինչ չէր զգում՝ ոչ ջերմություն, ոչ հետաքրքրություն, ոչ ձգում, միայն ու միայն դատարկություն էր, ուրիշ ոչինչ: Բայց նա ամենուց դա, ամենուց նաեւ այն վախը, որ միշտ ունեցել էր հոր հանդեպ՝ նրա կարծիքը, նրա ցավը, նրա հնարավոր հիասթափությունը: Ինքնագուրու որոշում կայացրեց: Առաջին անգամ իր կյանքում ոչ ճիշտ մարդու համար:

Երբեմն մարդիկ սխալ քայլ են անում ոչ թե որովհետեւ չեն հասկանում որն է ճիշտը, այլ որովհետեւ շատ լավ հասկանում են: Եվ հենց դրա համար են փախչում ցավից ընտրելով այն, ինչ հետո ավելի է ցավեցնելու:

Նրա ընկերոջ հետ շփվելու ընթացքում Սուլանան կամաց-կամաց բացահայտեց մի բան, որը միաժամանակ եւ՝ թեթեւացնող էր, եւ՝ կործանարար. տղաները իր մասին ոչինչ չէին ասել միմյանց: Խաղ չէր եղել, փորձություն չէր եղել, ոչ մի ստուգում, ոչ մի խորամանկ քայլ: Իսկական սերը նրա հետ խաղ չէր արել: Եվ հենց դա գիտակցելն էր ամենացավալին: Ոչ թե այն, որ սխալվել էր, այլ այն, որ իր կյանքը խճճել էր հենց ինքը:

Այդ պահին նրան թվաց՝ այլևս էլք չկա: Նա մտածում էր՝ արդեն շփվել է նրա ընկերոջ հետ, իսկ նրան կիրցնի ընդմիշտ: Բացի այդ, նրա մեջ սարսափելի վախ կար, որ հայրը երբեւէ կհիմանա երկու պատմությունն էլ: Այդ վախը խեղդում էր նրան, զրկում խոսելու համարձակությունից: Վերջապես Ռոմանը գրեց աղջկան ու աղջիկը նամակը սկսեց կարդալ հեկեկանքով: Անհնար է բացատրել, թե որքան խորն էր կարոտը թաքնված իր ներսում: Սիրտը անհանգիստ թեւածում էր կրծքի մեջ, շունչը կիսատ-կիսատ էր գալիս, իսկ աչքերից հոսող արցունքները խառնվել էին իրար՝ եւ՝ ուրախության, եւ՝ տխրության հետ: Սուլանան շտապեց անկեղծապես, քանի որ զգում էր, թե ինչքան մեղավոր է: Տղան ասաց, որ սպասի մինչև իր գալը. եթե դա չշարունակվի, ինքը կգա, եւ ամեն ինչ լավ կլինի:

Բայց Սուլանայի համար այդ պահին «լավ» հասկացություն այլևս չկար: Նա էլք չէր տեսնում: Եվ շարունակում

էր այն ընկերությունը, որը ոչ սեր էր, ոչ ընտրություն, այլ փախուստ:

Երբ նա մի օր վերադարձավ հայրենիք ու նայեց Սուլանայի աչքերի մեջ, աղջիկը չկարողացավ զսպել իրեն: Արցունքները հոսեցին առանց հարցնելու: Նա լացում էր, հեկեկում, ինչպես միայն նրանք են լացում, ովքեր իրենց սրտի առաջ անպաշտպան են: Նա նորից բռնեց Սուլանայի ձեռքերը, առավ իր ափերի մեջ ու նույն ձայնով ասաց.

-Լավ կլինի: Բայց երբեմն կան խոսքեր, որոնք ճշմարիտ են, բայց ուշացած:

Անցան ամիսներ: Սուլանան նշանվեց: Բազում փորձությունների միջով անցնելով՝ դարձավ նրա ընկերոջ հարսնացուն: Այդ պահին արդեն իսկապես էլք չկար: Ոչ որովհետեւ ստիպեցին, այլ որովհետեւ ինքն իրեն փակել էր իր իսկ ընտրության մեջ:

Հենց հարսանիքի օրը նրանք հեռացան երկրից: Երկար ժամանակ ապրեցին Վերոնայում: Կյանքը շարունակվեց: Բայց ամեն անգամ, երբ Սուլանան հիշում էր նրան, իր մեջ նորից վերապրում էր այն զգացողությունը, որը ապրել էր տարիներ առաջ: Այն իրականը: Այն մաքուրը: Այն, որը իրենն էր, բայց երբեք իրենը չդարձավ:

Սուլանան չի վախենում այդ սիրուց: Չի ուրախում այն: Եվ եթե անգամ ինչ որ մեկը դա մեղք համարի, նա արդարացնում է այդ սերը: Որովհետեւ այն ծնվել է լռության, խելքի ու հոգեւոր մտերմության մեջ: Այն ոչինչ չի խլել, ոչինչ չի փչացրել: Այն պարզապես մնացել է նրա մեջ որպես ճշմարտություն:

Որովհետեւ կյանքում կա մի սեր, որը մինչև վերջ չես ապրում, բայց որը ամբողջ կյանքիդ հետ ապրում է:

Նրանք երբեք իրար չասացին այն, ինչ զգացին ու պիտի ասեին: Նրանք ընտրեցին լռությունը: Այն լռությունը, որ Վերոնայի փողոցներում խոսում էր՝ քարերի, սովորների ու երեկոյան քամու մեջ:

Սուլանան այլևս երբեք չզգաց այն սերը, որն զգացել էր նրա հանդեպ: Ոչ ուժով, ոչ խորությամբ, ոչ մաքրությամբ: Այդ զգացողությունը չկրկնվեց: Այն մնաց միակ ինչպես մեկ անգամ տեսած լուսին, որ այլևս նույն կերպ չի վերադառնում:

Ու ուրիշին ասելու ոչինչ չմնաց: Որովհետեւ երբ սրտիդ ամբողջ բառապաշարը արդեն ասել էս մեկ մարդու՝ լռությամբ. հետո խոսքերը դառնում են սովորական:

Կան սերեր, որ չեն դառնում պատմություն:

Հունեն սկիզբ ու վերջ: Հունեն «մեք»:

Բայց ունեն հավերժ ներկայություն մարդու ներսում:

Դրանք չեն պահանջում արդարացում:

Չեն աղմկում:

Չեն խանգարում կյանքին:

Դրանք պարզապես կան:

Եվ դա բավական է:

Արմանուշ Գրիգորյան



ՌՈՒԶԱՆ ՎԱՐՊԱՆՅԱՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԱՐԱԳԻՐԸ



Ռուզան Արտուշի Վարդանյանը ծնվել է 1985 թվականի նոյեմբերի 27-ին, ՀԽՍՀ Կամո (այժմ Գավառ) քաղաքում: Ավարտել է Գավառի թիվ 1 միջն դպրոցը, Գավառի ինդուստրիալ մանկավարժական քոլեջը, ապա Գավառի Պետական Համալսարանը: 2019-2021 թվականներին ուսանել է ԳՊՀ Մագիստրատուրայի «Հայոց լեզու և գրականություն» բաժնում և ստացել մանկավարժի որակավորում: 2007-2020 թվականներին աշխատել է Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմում որպես թեմակալ առաջնորդի օգնական:

2021 թվականից աշխատում է Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում որպես ուսումնական գծով փոխտնօրեն: Նրա ստեղծագործությունները լույս են տեսել «Վերածնունդ», «Գեղամա աշխարհ» համահեղինակային ժողովածուներում, «Գեղամա աշխարհ» մարզային թերթում:

Ամուսնացած է: Ունի դուստր:

2025 թվականին լրացավ հայ արձակագիր, սցենարիստ Հրանտ Մաթեոսյանի ծննդյան 90 ամյակը, ինչը հաճելի առիթ դարձավ վերընթերցելու մեծ գրողի թողած գրական ժառանգությունը և կրկին մտորելու նրա ստեղծագործական մտքի, երկերում արձարծվող համամարդկային հարցերի և գրական-գեղարվեստական որակների շուրջ: Ահա, այդ անդրադարձն էլ համագեցրեց մի համեստ գիտահետազոտական աշխատանքի, որը սիրով ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը:

Հրանտ Մաթեոսյանի ստեղծագործությունը 20-րդ դարակեսից սկսած ոչ միայն նոր ասելիքով համարեց հայ գրականության զանազան, այլև բարձրացրեց այն նոր մակարդակի վրա և դարձավ գրավոր յուրահատուկ հուշարձան հայ գյուղը, հայեցի մտածողությունը, վարքուբարքը, մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները արձանագրելու հարցում: Հրանտ Մաթեոսյանի գրական հուշարձանները ստեղծվեցին նոր խոսքի, գրողի անհատական լեզվամտածողության և պատմության ու իրականության համահասնության սկզբունքով, որոնք պարզորոշ կերպով արտահայտեցին փաստերի էությունը, նկարագրեցին հայ մարդու ընթացքն իր կենսագործունեության քաղաքական, հասարակական, մշակութային, սոցիալական և կենցաղային-առօրեական մակարդակներում: Դրանք սեղմ ու բազմաձևավալ, հաճախ էլ ժողովրդական ու պարզունակ խոսքով քննեցին իրերի տեղն ու նշանակությունը, բացահայտեցին հայ մարդու, նրա ընտանիքի, նրա գյուղի, նրա հայրենիքի որակն ու տեսակը: Հաճախ խնդիրները լուծեցին ներքին մտորման, ապա նաև՝ մենախոսության, երկխոսության, որեւէ դիպվածի կամ սեփական կյանքի պատմությանը անդրադառնալու միջոցով:

«Մեր գրականության մեջ, - նկատում

է գրականագետ Վաչագան Գրիգորյանը, - Մաթեոսյանը, ավելի քան մեկ այլ գրող, լայնորեն գործածեց ներքին խոսքը՝ որպես մարդկային բնավորությունը բացահայտելու, ինչպես և գեղարվեստական կառույցի կայացման հիմնական միջոց: Ներքին խոսքը, որ ավելի մենախոսություն է, դառնում է մարդկային հոգեբանությունը, ներաշխարհը տանող ամենաուղիղ ճանապարհը»:

Հրանտ Մաթեոսյանի մուտքը գրական ասպարեզ ոլորին չէր, սակայն գրականության շրջապատույտում գրողն առանձին տեղ ունեցավ իր մտահայեցությամբ և խոսքի ինքնատիպությամբ:

«...Հրանտ Մաթեոսյան գեղարվեստագետն իր պատուհի յուրահատկություններով չի ենթարկվում մախրեթաց շրջանի հեղինակների ոճական յուրահատկություններին կամ, ասենք, ավանդույթին, եթե այդպիսին կա: Դա նրա տաղանդի առանձնաշնորհումն է. այլ դեպքում լինելու էր ենթակայություն, որ կնշանակեր անտաղանդություն կամ մանր շնորհ»,- ընդգծում է գրականագետ Վալերի Փիլոյանը:

Հրանտ Մաթեոսյանը, արձարծվով անհրաժեշտ խնդիրները, երբեք չանտեսեց դրանց միջև եղած կապերը: Նրա գեղարվեստական խոսքը սկզբնավորվեց իր մեջ ընդգրկելով կյանքի խոր ճանաչողություն: Նրա խոսքը քաղցրալուր եղավ ընթերցողի սրտին ու հոգուն, քանի որ այդ ստեղծագործությունները մի կողմից ընթերցողի խախտախախտի ու նախապապերի կռած հայրենիքի, այդ հայրենիքի կիզի արեւի, խոխոջացող ջրերի, հերկվող արտերի մասին են, մյուս կողմից մարդու, մարդկայինի:

Ինչպիսի սոցիալական միջավայր էլ քննելու լինեք, առանցքում եղել է լինելու է մարդը՝ իր հույզերով ու ապրումներով, կորուստներով ու ձեռքբերումներով, ֆիզիկական ու մտավոր արտահայտություններով, հոգեւոր ու բարոյական աշխարհով, իր անսահմանափակ դրսևորումներով: Այս սկզբունքով է առաջնորդվել նաև Հրանտ Մաթեոսյանը փորձելով մարդուն բացահայտել տարբեր կերպարների միջոցով:

Նրա ստեղծագործությունները սեփական ընթացքով արտացոլեցին հայ ժողովրդի անցած մի քանի հազարամյա ուղին՝ բոլոր դիմագրաված խնդիրներով ու դժվարություններով հանդերձ:

Հրանտ Մաթեոսյանի երկերը ընթերցողի համար բացահայտեցին հայ ժողովրդի ավելի հեռվից գալու պատմությունը և ավելի հեռուն գնալու հնարավորության տեսլականը, և այդ արեցին մեզ հարազատ «այք»-ն ու «բեն»-ը սովորեցնելու նման: Հայ մարդու ընթացքն ու հարատեւման բանաձևը ցույց տվեցին հայկական անջնջելի և օրինակելի կաղապարի ընտանիքի միջոցով: «Մարդկային, ընտանեկան այն ջերմությունը, որ կա նրա հերոսների մեջ, - նկատում է Վ. Գրիգորյանը, - դառնում է գոյության կարելուր նախապայման, այստեղ բոլոր անհանգստացած են իրենց մերձավորով, հարազատով, ապրում են նրանց հոգսը, լավն ու վատը համարում իրենցն ու բոլորինը»:

Մաթեոսյանի հերոսները մի ողջ ժողովրդի անցյալի և ներկայի հանրագումարի հաճախ կարողացան ներկայացնել մեկ ընտանիքի կյանքի և գործունեության նկարագրությամբ:

«Անձան արեւ» վիպակը՝ հին ու նոր կացութաձևերի, փոխարարներույնների արտահայտման հանգրվան

Հրանտ Մաթեոսյանի «Անձան արեւ» վիպակում առանձին ուշադրություն են պահանջում հերոսների կյանքի ու գործունեության, դրանցում ավանդականի և նորի ընթացումների և այդ հերոսների աշխարհայացքի տարբերությունների հարցերը:

Աղունի վիպակի կենտրոնական հերոսուհու ծննդավայրը Վանքեր գյուղն է, իսկ նաև, Սիմոնը, Աբելը, Արուսն ու մյուսները այլ միջավայրի մարդիկ են: Աղունը մեծացել է գողությամբ զբաղվող Կնյազ Իշխանի տանը, որի ընտանիքը երբեք կարիքի մեջ չի եղել: Աբելի ընտանիքը հաջող վաստակել է բազմաշարքար աշխատանքով, ու, չնայած իր համար աշխատանքությունը լավ չի ապրել՝ հաց ու կարտոֆիլ է կերել: Վաղ հասակում Աղունը գրկվել է մորից և հիշողության մեջ մայրական սեր, ջերմություն չի ձեռավորվել: Խորք մոր հետ անցկացրած մանկության մի քանի տարիները տխուր հիշողություններ են վերածվել: Դարպասեցի մայրացուն երեւան չի հանել աղջկա օժիտակալը, բաժինքի համար նախատեսվածից միայն հորաքրոջ գործած գորգն ու կարպետներն է ուղարկել Ծմակուն:

Անվանի հնագետ, ազգագրագետ Երվանդ Լալայանն իր հուշագրություններում բերում է բազմաթիվ վկայություններ հայ ընտանիքում աղջկան տրվող օժիտի բազմազանության մասին. «Նրա օժիտի մեջ մի գույգ սպիտակեղենի հետ դրված է լինում արծաթյա քամար, արծաթյա թաս հազարփեշյան, ապարանջան և այլն»:

«Հայ ավանդական ընտանիքում երբեք էլ չի անտեսվել աղջկա դերը, հետեւաբար ամուսնացնելիս կարելուրվել է օժիտի ձեւով նորաստեղծված օգնելը»,- իր հերթին նկատում է Վ. Գրիգորյանը: Մեջբերվածը խաղաղ կեցության այն պարզ բանաձևերից մեկն է, որոնք ընկած են հայ ավանդական ընտանիքի հիմքում: Նորաստեղծների ծնողները նոր կազմավորվող օջախը ապահովել են ապրուստի շոշափելի միջոցներով և, համաձայն ընդունված կարգի օժիտով, դրանով նաև որոշակի վերաբերմունք դրսևորելով երիտասարդների նկատմամբ: Տրամաբանական է, որ այսպիսի մի իրողություն չէր կարող դուրս մնալ Աբելի ավանդական ընտանիքի ուշադրությունից: Ընտանիքի աչքից չէր կարող վրիպել նաև Աղունի երկար ու գործունյա լեզուն: Ուստի, բաժինքի խնդիրը դեռ չհարթված, ընտանիքին սկսում է նեղություն պատճառել նաև հարսի անհաշտ, անկողմնաբան բնավորությունը: Աղունը որեւէ հարց չի թողնում անպատասխան՝ անկախ դիմացիների սեռից և ընտանիքում զբաղեցրած կարգավիճակից, իսկ պատասխանն իր հերթին հազեցած է կշտամբանքով, հանդիմանությամբ:

Ազգագրական աղբյուրները վկայում են հայ ընտանիքի յուրաքանչյուր անդամի խիստ կանոնակարգված վարքի մասին. «Հայկական ընտանեկան համայնքը հազարամյակների ընթացքում մշակել էր իր անդամների իրավահարաբերությունները կարգավորող բանավոր կանոններ: Գիտնականների ճիշտ դիտողությամբ, դրանց մեջ ամենաեականը երկու սեռերի փոխհարաբերության հարցն էր և ապա՝ ավագության կարգը»: Աբելի ընտանիքի կյանքն իր բազմաթիվ դրսևորումներով զգալի չափով տեղավորվում է ընդգծված կաղապարի մեջ: Մինչդեռ որեւէ կերպ կաղապարվելու կամ նոր միջավայրում ադապտացվելու հույսեր չեն ներշնչում նորահարսի մոտեցումները: Ելնելով Աղունի վարքագծից, նոր միջավայրի մարդիկ խոր հոգոցով արձանագրում են, որ հարսը լեզուն էլ հետն է բերել, ինչը վկայում է այն մասին, որ վանքերեցի հարսը հակադրվում է ավանդական վարքուբարքին:

Ավանդական վարքուբարքի առնչությամբ մեզ հարուստ տեղեկություններ է հաղորդում նաև ազգագրագետ Ռ. Նահապետյանը. «Հայաստանի պատմագրական գրեթե բոլոր շրջաններում գերիշխել է ընտանիքի նահապետական կենսաձևը, որի բնորոշ երեւույթներից է եղել կանանց, առանձնապես հարսների նկատմամբ կիրառված սահմանափակումների համակարգը»:

Աղունի անհաշտ բնավորությունն ի սկզբանե նկատում է հատկապես տանավազը՝ սկեսրայր Աբելը: Ազգագրությունը մեզ հուշում է, որ հնում, հայկական գերդաստանի հայրն ունեցել է

բացարձակ իշխանություն, որը, թեև չի գործադրվել դաժանորեն, սակայն տարածվել է ընտանիքի բոլոր անդամների վրա: Այս մասին հաղորդվում են նաև հետաքրքիր մանրամասներ. «Ծաշին կամ ընթրիքին... պապը նստում էր սեղանի գլխին: Նրա խոսքը ընդհատելը անխոհեմություն էր... Ընտանիքում բոլոր կնճռուտ հարցեր, վեճերը լուծվում էին միայն պապի գիտությամբ»: Հայկական գերդաստանում նշանակալի դեր է հեղինակությունը և ունեցել տատը կամ մեծ մայրը, որը, նաև որոշ չափով հանդիսացել է հայրական բացարձակ իշխանության հակակշիռը. «...Գերդաստանի ներքին կառավարությունը գտնվում է տատի կամ մոր ձեռքին. նա է հսկում հարսների և աղջիկների վրա»:

Ազգագրության վերը բերված դիտարկման խկությունը մենք գտնում ենք նաև գործելակերպի մեջ. «Այդ ամառ հղի էր, -ասվում է Աղունի մասին, - ուզում էր ուտել, ուտել, ուտել, իսկ հացի ու պանրի վրա կողպեք էր դրված և բանալին խճճված էր պառավի կարկատանների մեջ...»: Չմեռվա համար ամբարված սննդամթերքի, կուտակված գարու, ցորենի, ամբողջ մառանի պահպանությունը կարելուր գործառույթ է եղել հայկական տան մեջ, իսկ այդ գործառույթն իրականացնող անձը տիրապետում էր ոչ միայն իր գործին, այլև այդ հանգամանքի նշանակությանը. «Սննդամթերքների մառանի բանալիների տրցակը և բաշխման իրավունքը նահապետի կնոջն էր պատկանում. բանալին նրա իրավունքների խորհրդանիշն էր հանդիսանում»: Այս բոլորը հայ ընտանիքի հանապազօրյա ընթացքի մասն էր կազմում և պատշաճում էր նրան այնպես, ինչպես ամեն մարդացեղի ներկայացուցչին իր մաշկի գույնը:

Նոր միջավայրից Աղունին զանազանորո միայն անբաժինք լինելը կամ աննահանջ կերպով մերձավորների խոսքին հակադրվելը չէ, այլև իր օրերում զարգացող, լուսավորվող կյանքը, իր դարաշրջանի կոնֆլիկտները, որոնք հատուկացել են բեկվում են անհատի հոգեբանության մեջ: Աղունին համակել է լավ ապրելու հոգսը: «Հոգեբանության և բնավորության ձեւավորման գործում առաջնային, որոշիչ դերը կեցությանն է, - գրում է Վ. Գրիգորյանը, - օրինաչափորեն Մաթեոսյանը հենց կեցությունից է գտնում դեպի անհատի հոգեբանություն, ներաշխարհի բացահայտումները, ընդգծում է անձի սոցիալական հոգեբանությունը՝ կեցության խորքային ընթացմամբ»:

Ծմակուտը հնավանդ գյուղ է, մի գողտրիկ աշխարհ, որի գավակները օրավոր հացը վաստակում են տքնաջան աշխատանքով: Սկստենք, որ աշխատանքը ելակետային նշանակություն ունի Մաթեոսյանի ողջ ստեղծագործության համար և երբոր է Մաթեոսյանական գյուղին, մանավանդ Ծմակուտին: Այստեղ մարդիկ վաստակածը կիսում են հավասարապես, մեծ ընտանիքներով ապրում են մեկ տանիքի տակ և վիզը չեն երկարում դեպի ուրիշ աշխարհներ և, որ ամենակարեւորն է, նրանց խնդիրները, դժվարությունները, նրանց վեճերն ու անհամաձայնությունները մինչև երդիկ են բարձրանում և այնտեղից դուրս չեն գալիս: Այլ է Աղունի դեպքում. «Կայուն ու անկայուն որակների կենսաբանականի և սոցիալականի, գլխավորի ու երկրորդականի համադրումներով էլ ամբողջանում է Աղունի բնավորությունը: Այս ամենով նա դառնում է ոչ միայն անհատական հատկանիշների արտահայտողը, այլ կենդանի կյանքի կրողը, որտեղ երեւույթների կայացման հիմքը բացահայտվում-ամրագրվում է «սոցիալական բեռից ազատված ժամանակով»: Աղունի միտքը զբաղված է քաղաքի կյանքով, նրա առաջընթացով, մտքի ու կենցաղի լուսավորությամբ, չնայած որ քաղաքում վաղուց ի վեր գլուխ է բարձրացրել խաբեությունը, մարդկանց միջև դրամական փոխհարաբերությունը:

/Հարունակելի/

Հունվարի երկրորդ տասնօրյակի ավարտին վերջապես առատ ձյուն տեղաց Գեղարքունիքի մարզի բոլոր տարածաշրջաններում, մի իրադարձություն, որը տեղի էր ունենում վերջին մի քանի ծնեռների ընթացքում: Ու սրանից առավել հրճվանք ապրում են հատկապես ավագ սերնդի մարդիկ, ովքեր շատ լավ են հիշում ոչ հեռավոր անցյալի տեսական, բքառատ ու ճնառատ ծնեռները, երբ օրերով ու շաբաթներով ձյունն անդադար մաղում էր երկնքից, բռնում ամեն լեռ ու ձոր, դաշտ ու անտառ, փողոց ու բակ, երբ ջրհորդաններից կախվում էին սառցե լուլաները, տների ապակիները գիշերային սառնամանիքի ազդեցության տակ պատվում էին աննկարագրելի գեղեցիկ նկարչությամբ, որի վրձնողն այդ դեպքում ամենաստեղծագործ ու

ԱՅՆՔԱՆ ԵՐԿԱՐ ՄՊԱՍՎԱԾ ՁՅՈՒՆԸ



ամենահանճարեղ բնությունն էր: Այդ անցած ծնեռները կապված են շատ ու շատ վառ տպավորությունների սահմակ ու դահուկ թշվուռ, ծնից բակն ու տանիքները մաքրելու, ճնագնդի խաղալու, այլ հետաքրքու-

թյունների հետ, որոնք մարդկանց սրտերն առավել կարոտով ու նաեւ տագնապով էին լցնում գրեթե անձյուն-անձմեռ վերջին տարիների պատճառով: Այո, նաեւ տագնապով, քանի որ ավագ սերնդի մարդիկ շատ ավելի լավ գիտեն ամենագործյան արժեքը, որը առատ ջրի, առատ բերքի, առատ ծաղկունքի, կանաչազարդ դաշտերի, փարթամ գարնան անփոխարինելի երաշխավորն է: Ու հիմա բոլորս խանդավառ նայում ենք լիովին ճնածածկված, ճեփ-ճերմակին տվող մեր լեռներին, դաշտ ու արտ ծածկած ձյան սավանին ու բերկրալից սառն: -Հագար բարով եկար, մեր սիրելի, մեր ամենասպասված, մեր ամենագործ, մեր լեռնաշխարհի հարատեւ հարստություն միշտ անարատ, միշտ հեքիաթային ու սպիտակ ձյուն: **Խոսքով ԽԼՂԱՅԱՆ**

ՎԱՐՂԵՆԻՍԻ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԿԵՐՑ ՍԱՂԱՔԵԼ ԹԱՄԵՎՈՍՅԱՆԸ ՇԱՆՄԱՏԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՁԱՇԱՐՈՒՄ ԳՐԱՎԵԼ Է ԵՐԿՐՈՐԻ ՏԵՂԸ



Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ Սաղաթել Թադևոսյանը Անդրանիկ Մարգարյանին նվիրված շախմատի հանրապետական հուշամրցաշարում զբաղեցրել է երկրորդ պատվավոր տեղը՝ առաջին տեղի համար պայքարում զիջելով միայն լրացուցիչ ցուցանիշներով:

Ինչպես տեղեկացրեց Վարդենիսի թիվ 4 հիմնական դպրոցի տնօրեն Անահիտ Սահակյանը, մրցաշարին Հայաստանի տարբեր մարզերից ու մայրաքաղաքից մասնակցել են 630 պատանի շախմատիստներ, ովքեր 9 օր շարունակ պայքար են մղել՝ առաջին հորիզոնականների համար:

Սաղաթել Թադևոսյանն Անդրանիկ Մարգարյանի հուշամրցաշարում 9 հնարավորից վաստակել է 7,5 միավոր:

-Սաղաթելն իր բարձր պատրաստվածությամբ, կամքի ուժով է նպատակալացությամբ բարձր է պահել ոչ միայն Վարդենիսի, այլև ամբողջ Գեղարքունիքի մարզի պատիվը՝ արժանապատվորեն ներկայացնելով մեր դպրոցը եւ համայնքը: Հարթել 630 շախմատիստների մրցապայքարում դա նշանակում է շատ լուրջ, ծանրակշիռ հաղթանակ: Նա անցած տարում եւս հանրապետական ստուգատեսներից մեկում գրավեց առաջին տեղը, ու մենք շատ հպարտ ենք նրա գրանցած հաջողություններով,- ներկայացրեց Անահիտ Սահակյանը:

Սաղաթել Թադևոսյանը ՀՀ Շախմատի ակադեմիայի Վարդենիսի մասնաճյուղի սան է:

Գեղամ Չարվաղարյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ Է ԻՐԱՎԱՆԱՑՎԵԼ «ԲԻՄԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻՑ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի 7-րդ դասարանում նախագծային աշխատանք է իրականացվել «Քիմիա» առարկայից «Խառնուրդների բաժանման եղանակները» որպես նախագծային ուսուցման արդյունավետ գործիք» թեմայի շրջանակներում: Ժամանակակից հանրակրթական համակարգում առաջնահերթ է սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին եւ գիտելիքների կիրառական ուղղվածության ապահովումը: Այս համատեքստում նախագծային ուսուցումը դիտարկվում է որպես արդյունավետ անկախարժական մոտեցում: Սույն հոդվածի նպատակն է՝ ներկայացնել Մարտունու թիվ 1 հիմնական դպրոցի 7-րդ դասարանում իրականացված «Խառնուրդների բաժանման եղանակները» թեմայով նախագծային աշխատանքի փորձը եւ դրա ազդեցությունը ուսումնական գործընթացի արդյունավետության վրա:

Նախագիծը ղեկավարել է քիմիայի ուսուցչուհի Լուսինե Ղազարյանը:

Նախագծի հիմնական նպատակը խառնուրդների եւ դրանց բաժանման եղանակների վերաբերյալ սովորողների գիտելիքների համակարգումն ու խորացումն էր:

Առաջադրված խնդիրներն էին՝ ձեռնարկել խառնուրդների տեսակների վերաբերյալ հստակ պատկերացումներ, ծանոթացնել խառնուրդների բաժանման հիմնական եղանակներին եւ դրանց կիրառելիությանը, զարգացնել հետազոտական, փորձարարական եւ վերլուծական հմտությունները, խթանել համագործակցա-

յին ուսուցումն ու պատասխանատվության զգացումը:

Նախագծային աշխատանքն իրականացվել է փուլային մեթոդաբանությամբ: Նախնական փուլում ուսումնասիրվել են խառնուրդներ հասկացությունը եւ դասակարգումը: Հաջորդ փուլում խմբային աշխատանքի միջոցով սովորողները ուսումնասիրել են խառնուրդների բաժանման եղանակները՝ գտնում /ֆիլտրում/, նստեցում, գոլորշացում, թորում, մագնիսական բաժանում, քրոմատոգրաֆիա:

Գործնական փուլում իրականացվել են պարզ փորձեր աղերի ջրային լուծույթների բաժանում շոգիացման եղանակով, սպիրտի ջրային լուծույթի բաժանումը թորման սարքի կիրառմամբ, անհամասեռ խառնուրդների բաժանում նստեցման եւ ֆիլտրման եղանակներով եւ այլն:

Աշխատանքի ամփոփման փուլում սովորողները ներկայացրել են իրենց արդյունքները սահիկաշարերի, պատառների եւ բանավոր զեկույցների միջոցով:

-Նախագծի իրականացման արդյունքում նկատվել է սովորողների ճանաչողական ակտիվության աճ, թեմայի վերաբերյալ գիտելիքների ամրապնդում եւ գործնական հմտությունների զարգացում: Սովորողները կարողացան հիմնավորել խառնուրդների բաժանման տարբեր եղանակների ընտրությունը կոնկրետ օրինակների միջոցով եւ կիրառել ստացված գիտելիքները գործնական իրավի-



ճանկերում: «Խառնուրդների բաժանման եղանակները» թեմայով իրականացված նախագծային աշխատանքը հաստատում է նախագծային ուսուցման արդյունավետությունը 7-րդ դասարանում քիմիայի դասվանդման ընթացքում: Այն նպաստում է ուսուցման որակի բարձրացմանը, սովորողների ինքնուրույնության եւ համագործակցային կարողությունների զարգացմանը: Նմանատիպ նախագծերի կիրառումը նպատակահարմար է ընդլայնել հանրակրթական դպրոցներում,- ներկայացրեց Մարտունու թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն Անժելա Պողոսյանը:

«Գեղամա աշխարհ»

ՄԱՐՏՈՒՆԻՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ՆՈՐԱՐԱՐԱՎԱԿԱՆ ԱՆՍԱՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅԻՆ ՀԱՆԻԴՊՈՒՄ- ՔՆՆԱՐԿՈՒՄ



Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանում կայացել է «Նորարարական անասնապահություն» թեմայով համդիպում- քննարկում: Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, «Նորարարական անասնա-

պահություն. կենդանիների նախարարաշ, բուծում եւ շուկաներ» (INLIMA) ծրագիրը Հայաստանի Հանրապետությունում մեկնարկել է 2025 թվականի նոյեմբերից: Այն միավոր է Հայաստանում անասնապահության ոլորտի բարեփոխումներին, գյուղական տնտեսությունների եկամուտների աճին եւ պարենային անվտանգության ամրապնդմանը:

Ծրագիրն իրականացվում է «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության կողմից՝ Ավստրիական զարգացման եւ համագործակցության ծրագրային միավորի՝ Ավստրիայի

գյուղական գործակալության ֆինանսավորմամբ: Հունվարի 29-ին, ծրագիրը ներկայացնելու նպատակով, Մարտունու համայնք են այցելել ծրագրի ղեկավար Վահե Հովհաննիսյանը, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչության մասնագետներ:

Հանդիպմանը մասնակցել են համայնքում անասնապահական ոլորտի մասնագետներ, կաթ վերամշակողների, սպանդանոցների ներկայացուցիչներ, կովերի արհեստական սերմնավորում իրականացնող տեխնիկներ եւ անասնաբույժներ: Ներկայացվել է ծրագրի իրականացման նպատակները, բաղադրիչները, ինչպես նաեւ՝ Գեղարքունիքի մարզի եւ նրա համայնքների ներգրավվածության ու դերակատարման մանրամասները: Ծրագրի ղեկավարը նշել է, որ Գեղարքունիքի մարզում առաջին փորձը ցանկանում են իրականացնել Մարտունու համայնքում:

«Գեղամա աշխարհ»